

Հայաստան ծառատունկ ծրագրի կանաչ երազանքն իրականություն է դառնում. 1994 թ.-ից ի վեր տնկվել և վերականգնվել է շուրջ 2,500,000 ծառ

Երևան— Հայաստան ծառատունկ ծրագիրը, որի պաշտոնական անունն է «Էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամ, ավարտեց 2008 թ. նախատեսված 460,070 ծառերի տնկումը՝ վերականգնված և տնկված ծառերի ընդհանուր թիվը հասցնելով մոտ 2,500,000-ի՝ 1994 թ-ին կազմակերպության Հիմնադրումից ի վեր:

Այս աշնանը, «Էյ-Թի-Փի»-ի Գյուղական և լեռնային շրջանների զարգացման ծրագրով տնկվել են 402,720 տնկիներ՝ Գեղարքունիքի և Լոռու մարզերի նոր անտառային տարածքներում, իսկ Համայնքային ծառատունկի ծրագրով տնկվել է 57,350 ծառ՝ Հայաստանի 10 մարզերի 188 վայրերում: **«Էյ-Թի-Փի»-ի Համայնքային ծառատունկ ծրագիրը գործում է քաղաքային և գյուղական Համայնքներում**

«Ծրագրով տնկած ծառերի թիվը գերազանցեց տարվա մեր ակնկալիքները: Այս բարձրորակ տեղական ծառատեսակների տնկիները տնկվեցին ընտրված վայրերում՝ նպատակ ունենալով բարձրացնել կաչողականության տոկոսը՝ ոռոգման ջրի առկայության, ցանկապատման և մոնիթորինգի, հողի որակի, ինչպես նաև տեղացի բնակչության՝ ծառերի խնամքը տանելու ոգևորության և պատրաստակամության շնորհիվ», նշել է ծրագրի ղեկավար Անահիտ Ղարիբյանը:

Գարնանը Համայնքային ծառատունկի ծրագրով տնկվել են 22,085 ծառեր և թփեր՝ ձեռք բերված կազմակերպության Կարին և Խաչպար տնկարաններից, ինչպես նաև 1,300, սոճու տնկիներ՝ Միրաք ընտանիքի անտառների վերականգնման տնկարանից, որոնք տնկվել են Համատեղ Նոր Նորքի ջերմոցային վարչության հետ:

Աշնանը, Հիմնադրամի Համայնքային ծառատունկ ծրագրով տնկվել է 33,965 ծառ և թուփ՝ Երևանի և Հայաստանի ինը մարզերի 97 վայրերում: Բացի այդ, «Էյ-Թի-Փի»-ն 115 հողատարածքներում տնկած ծիրանի, վայրի խնձորի, դեղձի և տանձի ծառերը 227,439 կգ (507,317 ֆունտ) մրգի բերք տվեցին, որոնցից օգտվեցին տեղական Համայնքները և Հաստատությունները:

Տարվա ընթացքում, ծրագիրը մասնակցեց մի շարք միջոցառումներում և արշավներում՝ կազմակերպված Ծիծեռնակաբերդում, Քաջաթաղում, Նուբարաշենում, Նորավանքում, Խոր Վիրապում և այլուր: «Էյ-Թի-Փի»-ն վաղուց ի վեր աջակցում է այդ տեղանքներին՝ տրամադրելով առողջ տնկիներ և կազմակերպելով հատուկ ուսուցում՝ նվիրված տնկման մեթոդներին և ծառերի խնամքին:

Օրինակ, կազմակերպությունը, Համագործակցելով տարբեր կազմակերպությունների և ուսանողների հետ, ծառեր տնկեց Նուբարաշենի գիշերօթիկ դպրոցի մոտ. ծրագիրը, մասնավորապես, Համագործակցեց HSBC բանկի, Synopsys ՓԸԲԸ, Հայաստանում Ամերիկյան Համալսարանի, Հայաստանի հուշարձանների մասին իրազեկման ծրագրի և Հայաստանում գործող այլ կազմակերպությունների հետ:

Համայնքային ծառատունկի ծրագիրն ընդարձակեց շահառուների թիվը 15 գյուղերում, ուր 5,572 ընտանիքներ օգուտ ստացան Հիմնադրամի կողմից

2004 թ տնկած պտղատու ծառերից: Գյուղում ծառատունկ ծրագրի նպատակն էր բարեկարգել ետնաբակում հիմնադրված այգիների որակը, որպեսզի դրանք հետագայում ներկայացվեն ծրագրի նվիրատուներին՝ հովանավորության նպատակով:

Գյուղական և լեռնային շրջանների զարգացման ծրագրով ծրագրով տնկվել է ավելի քան 400,000 ծառ

«Էյ-Թի-Փի»-ն մեկնարկել է անտառների վերականգնման նոր ծրագիր՝ Զրաշենում 40 հա (100 ակր) համայնքային հողատարածքի վրա, կազմակերպության Միրաք տնկարանի մոտ և վերջերս նախատեսված Մարգահովտում բացվելիք Մայքլ և Վիրջինիա Օհանյաններ բնապահպանական կենտրոնի մոտ: «Հարկ է նշել, որ մենք նոր անտառ ենք տնկել Զրաշենի տարածքում, և անտառտնկամ համար այդ հողատարածքը ստացել ենք Հայաստանի պետական Հայանտառ ՊՈԱԿ-ի հետ համագործակցության արդյունքում», նշեց Գյուղական և լեռնային շրջանների զարգացման ծրագրի ղեկավար Վադիմ Ուզունյանը: Այս աշնանը ծրագիրը տնկեց առաջին 7,000 կաղնու տնկիները՝ Հայանտառի հետ սերտ համագործակցության շնորհիվ ձեռք բերած տարածքում:

«Էյ-Թի-Փի»-ն աջակցություն ստացավ համայնքի և վերապատրաստված անտառատնկում կատարողների թմի կողմից: Անտառատունկում իրականացնելու նպատակով՝ 25 Լոռու մարզի բնակիչ սեզոնային աշխատանքի է ընդունվել, որոնք ցանկացան հիմնադրամի նախաձեռնած աշխատանքների մասնակիցը դառնալ: Այս ծրագրի շնորհիվ շատ ընտանիքներ բարելավեցին իրենց սոցիալ-տնտեսական կացությունը՝ միևնույն ժամանակ բարեկարգելով շրջակա միջավայրը և մարզի բնական պաշարների բազան», ավելացրեց Ուզունյանը:

Այս տարի, Գեղարքունիք և Տավուշ մարզերից 399 գյուղական ընտանիքներ իրենց տնամերձ տնկարաններում աճեցրեցին 309,720 տնկիներ, որոնք կազմակերպությունը իրենցից ձեռք բերեց հետագա անտառների վերականգնման նպատակով: Նշված Տնամերձ տնկարանների աննախադեպ ծրագիրն արժանացավ Հեղինակավոր Հանուն կայունության՝ էներգետիկայի համաշխարհային մրցանակին (Energy Globe Award), որը կազմակերպությանը շնորհվեց մայիսին՝ Եվրոպական խորհրդարանի կողմից:

«Էյ-Թի-Փի»-ի Միրաք ընտանիքի անվան տնկարանում արտադրված մնացած 86,000 ծառերի տնկումը իրականացվեց այս տարվա աշնանը:

Հարյուր տեղաբնակներ ներգրավել էին Այգուտ և Դպրաբակ համայնքներին պատկանող 100 հա (250 ակր) հողատարածքի վրա ծառատունկի գործնթացին: «Տեղի բնակիչները ոգևորված և սոգորված էին անտառների վերականգնման աշխատանքներով, որոնք «Էյ-Թի-Փի»-ի նախաձեռնությունն էին՝ ուղղված անտառազրկման և Գետիկ գետահովտում գտնվող գյուղերը վտանգող զանգվածային սողանքների փոխկապակցված խնդիրների դեմ պայքարին», - նշեց Ուզունյանը: «Սողանքները հաճախակի երևույթ են դարձել այս տարի և քանդել են մի քանի ընտանիքների տները: Այս ընտանիքները գիտակցում են, որ լավ կայացած և խնամված անտառները մեծ ներուժ ունեն՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական բարիքներ ու օգուտներ տրամադրելու համար»: